

եւ կը զգայ. «Եւ յառաջնում ամի արքայութեանն (Շահ Սէֆիի) գնացեալ ի տեսութիւն նորին... եւ ի նմանէ եւս մեծարեցաւ ըստ յուշ առնելոյն մեծամեծացն թէ ծանալթ եւ մեծաշուք էր սայ առաջի հաւոյն քո: Եւ ապա յուսալով ի մեծազաւրն յԱստուած՝ ղեզերեալ ի դրանն արքունի աշխատութեամբ դուռն դուր՝ ծեալ ոգով չափ եւ մեծաջան լեալ, զի զերծեալ լիցի եկեղեցին ի ծանրալուծ հարկէն եւ ի դժուարակիր անրոյն: Զայս ածեալ զմտաւ թէ գնախկին եւ զբարձրագահ աթոռն ի մեծ հարկապահանջութենէն ազատեալ եւ ղերծեալ լիցի. զկնի այսորիկ զոր Տէրն ընտրեսցէ՝ նա լիցի մեզ հովիւ եւ առաջնորդ: Իսկ մեծ աւագանին եւ նախարարքն արքայի եւ մանաւանդ իշխանաց իշխան քրիստոսասէր խաւճա Նազարն իրազգած արարեալ զարքայն խորհրդոյն. եւ ապա եմուտ առաջի արքային սրբազան հայրս եւ մեծարեալ նստաւ ընդ արքային: ... Եւ յետ բազում խաւսից՝ հլու եւ հպատակ ղիմաւք ասէ ցոսայ. Այդ մեծաշուք եւ փառաւոր, ըստ խնդրոյ հայցման քո շնորհեցի քեզ, ազատեալ լիցի ղեկեղեցին ձեր ի յարքունի հարկաց մերոց. այլ դու աղաւթիւք նպաստ լեր մեզ ի պատերազմի թշնամեաց: Եւ այսպէս բազմայերկ աշխատութեամբ սուրբ հաւրս եւ խնամօք եւ ողորմութեամբն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ բարձեալ եղեւ հարկն, եւ ազատեալ եղեւ ի ծանր լծոյն սուրբ էջմիածինն»:

Առաքել Դաւրիթեցի կ'աւելցնէ թէ Շահը